



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ch. Lee Gypson

Ch. Lee Gypson

1794

891.99

2-17





ՅԱԿՈՐ ՅԱԿՈՐԵԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԻ

## ԵՐԳԵՐ

Հէյ, ձեզ ժառող, բանուր սղերբ,  
Մէկ էլ, մէկ էլ, մի զարկ աւեր.  
Մի զարկ աւեր դու շղթային,  
Որ քայքայի նա հիմնովին. . .  
Յ. Յ.

591.99  
Հ - 17

1906

301-89  
Հ-17

10 NOV 2011

ՅԱԿՈՒՅ ՅԱԿՈՒԲԵԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐ

(Բանաստեղծություններ) III

Սիրում եմ կռիւ ընդդէմ բռնութեան,  
Կռի մէջ է լոկ իմ անդորրութիւն.  
Կուեցէք և դուք, զո՛նք մաքառման,  
Կուով պիտ գտնէք դուք երջանկութիւն...  
(Երես 9)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Վարդանեանի

1906

30 MAY 2013

37000

ԱՄԲՈՆՆ ԻՄ ԱՇԽԱՐԻԸ

Որքան էլ ուզեմ ձգտել դէպի ձեզ,  
 Վեհապանծ սարեր,  
 Ու փարւել մաքուր ձեր ձիւնեայ կրծքին,  
 Որքան ուզեմ ես  
 Սլանալ վեր-վեր  
 Ու բռնակալին ոտքիս տակ տեսնել  
 Մեղկ սողոսկալիս,  
 էլի՜ չեմ կարող, կուսական լեռներ,  
 Երկիրը թողնել,  
 Որ խարխափում է կեդո ու մուրի մէջ,  
 Տառապում անվերջ.  
 Եւ ես կարիքի աշխարհն եմ ընտրում—  
 Ճնշած ու լքած,  
 Ուր վիշտ ու գրկանքն իրար հետ գրկւած,  
 Մի էլք են փնտրում:



9679-73

Дозволено Цензурою, Тифлисъ. 29 Апрель 1906 г.

Եւ դնէք, վառ աստղեր, որքան էլ դիւթող,  
Միւրաւ պարտւորող լինի ձեր հմայք,  
Որքան էլ գերէք հոգիս երազող  
Ու ինձ երկնային տանէք ձեր աշխարհք,  
                    Դարձեալ չեմ կարող.  
Կապւած եմ կամայ իմ մայր հողի հետ.  
Յար ու յարատե ամբօխի լացը,  
                    Յաւ ու կակիծը,  
Ինձ կոչ են անում, թէ արի պօէտ,  
                    Մեր վիշաւ լացիր,  
                    Մեզ ընկեր դարձիր:

—  
Օ, ինչպէս քննարկ է երկինք վերանալ,  
                    Վիշտ, հոգս մոռանալ,  
Լուսնոյ փայլի մէջ լողալ, սաւառնել,  
                    Աստղերին գրկել,  
Բայց և անողոր իրականութեան  
                    Ուրւականը սե,  
Որպէս մի ժանդ դե,  
Մարմնացած ըմբօստ բողբօլի նման—  
                    Տալիս է հրաման.  
—Իջիր երազոտ երկնային գահից  
                    Կեանքին մօտնալու,  
Նրան պարտք ունիս, հարկ ունիս տալու:

Ու պիտի իջնեմ... ամբօխից փախ տալ,  
                    Դժւար է, դժւար.  
Հոգիս ձուլւած է նրա հոգու մէջ,  
Ձղերս կապւած նրա ջղերին,  
                    Մի այլ ճանապարհ  
Գոյութիւն չունի երբէք ինձ համար.  
Եւ որքան դիւթող լինի ձեր հմայք,  
                    Երկինք ու աստղեր,  
Կայ մի արնալի կարիքի աշխարհ  
                    Ճնշւած ու լքւած՝  
                    Նրան եմ ընտրում,  
Այնտեղ վիշտ, զրկանքն իրար հետ գրկւած՝  
                    Մի ելք են փնտրում...

1905 թ.

Ա Ն Ո Ւ Ր Ջ

Մի լուսեղէն ոգի էր այն  
Ալ շղարշում պարուրւած,  
Ալ շղարշի թևերը լայն  
Եթերի մէջ տարածւած:

Թռչում էր նա մի ձեռքում սուր  
Միւսում սեղմած շղթաներ,  
Սեղմած տեղից, այնպէս ամուր—  
Ցայտում էին հուր-կայծեր:

Եւ երգում էր այն դիցուհին  
Բարձրից հուժկու, ահաբեկ.  
«Պրօլետարներ ողջ աշխարհի,  
Ուրբի ելէք, միացէք»:

Կայծակի պէս շեշտը երգի  
Երկրի կրճքին միւսեցաւ,  
Պրօլետարներ ողջ աշխարքի  
Ուրբի ելան, միացան...

1906 թ.

ԱՄԵՆԻՅ ԱՌԱՋ

Ջրաւոր, եղիր դու աշխատասէր,  
Հպարտ ու ազնիւ ամենից առաջ,  
Թէ սարուկ տեսնես, շուռ արուր երեսդ,  
Նա ատելի է ամենից առաջ:

Հարուստ իշխանի նւաճող ոյժից,  
Տես, չը վախենաս ամենից առաջ,  
Հարստութիւնը չէ՞ որ ընկեր է  
Մնազնուութեան ամենից առաջ:

Թո՛ղ ցամաք հացը լինի կերածդ,  
Վերնաշապիկդ կոշտ վուշից կարած.  
Ուրիշը թէ կուզ թաւիշ է հագած—  
Բայց սրիկայ է ամենից առաջ:

Ամենից առաջ, չքաւոր եղբայր,  
Տիողոսր չէ՞ որ հնչիւն է դատարկ,  
Բայց թէ ազնիւ ես—կունենաս միշտ յարդ,  
Ազնիւն արքայ է ամենից առաջ:

Ահա այլ հարուստ գոռոզ ու փքլած,  
Մեզ ինչ օգուտ թէ ոսկունն է թաղւած,  
Թո՛ղ հպարտանայ իր հարստութեամբ,  
Բայց որ յիմար է ամենից առանջ.

Ամենից առանջ, ամենից առանջ  
Մեզ—աշխատանքի որդիերանց համար  
Նրանց ժապաւէն ու շո՛ւքը ախմար  
Ծիծաղելի է ամենից առանջ:

1904 թ.

## ԵՐԱՆԻ ՆՈՐԱՆ

(Գ. Գ.-իմ)

Երանի նորան, ով մանուկ օրից  
Վիշտ ու զրկանքն է համարել ինձոյք,  
Ով փարթամ կեանքի շքեղ կենցաղից  
Զի էլ զգացել երբէք մի հաճոյք:

Երանի նորան, ով բիւր վշտերի  
Սպիններ ունի սրտի ծալքերում,  
Ով ամեն մի վէրք, ամեն մի սպի  
Վաստակել է բիրտ մաքառման կուռում:

Սիրում եմ կռիւ ընդդէմ բռնութեան,  
Գուի մեջ է լոկ իմ անդորրութիւն.  
Կուեցէք և դո՛ւք, զոհեր մաքառման,  
Կուով պիտ գտնէք դուք երջանկութիւն:

1905 թ.

ՕՏԱՐՆ ՈՒ ՀԱՐԱԶԱՏԸ

Հետաքրքիր մարդուն մէկը պտոյտ գալով  
շուկայում,  
Պահ մի կանգնեց խանութի մօտ արծաթա-  
գործ վարպետի.  
Այնտեղ մուրճի զարկերի տակ արծաթն էր  
հեկեկում  
Եւ վարպետի ուժեղ ձեռքում գալարելով,  
տափակում:  
Անցաւ մարդը մի այլ խանութ ու կանգ  
առաւ նրա մօտ.  
Ոսկերիչն էր թեթև մուրճով ոսկին ծեծում  
եռանդոտ.  
Նրա փափուկ զարկերի տակ համր, թեթև  
տնքալով,  
Փայլ ոսկին էր խուլ հառաչում, արտասուքը  
կուլ տալով:  
Թողեց նրան, անցաւ մարդը, դարբնոցի  
մօտ կանգ առաւ,  
Ուր երկաթն էր կռանի տակ աղմկելով բո-  
ղոքում.  
Հսկայ թափով իրար յետքից հարւածելով  
մեծ մուրճը  
Յորդ արցունքի—շանթի տարափ էր հեղե-  
ղում իր շուրջը:

Ու անցորդը դարձաւ նրան, այսպէս հարց-  
րեց երկաթին.  
«Աստ, եղբայր, է՞ր արծաթը արտասուում է  
կամացուկ,  
Ոսկին՝ քեքոյշ այդ մետաղը, դիմանում է  
իր վշտին,  
Մինչ դու—կոպիտ, սև մետաղդ, այդպէս  
դժգոհ վիճակից՝  
Ասես ցաւդ ուժեղ լինի քեքոյշ ոսկի—ար-  
ծաթից»:

—Այո, ձիշտ է քո ասածը, պտտասխանեց  
երկաթը,  
Բայց զգում եմ աւելի ցաւ, քանց ոսկին ու  
արծաթը.  
Մինչդեռ նրանք ծեծկըւում են իրենց օտար  
մետաղից,  
Ես հարւածւում, մղկտում եմ իմ հարազատ  
եղբորից.  
Չը կայ մի բան այս աշխարհում, ազնիւ  
պարոն, ցաւալից,  
Քանց այն, երբ մարդ ծեծկըւում է իր  
սեպհական կտորից:

Կ Ա Թ Ս Ա Վ Ա Ր

Որպէս զող բռնած, զայրացած առիւծ  
Շողեկաթսան է եռում, մռնչում,  
Հսկան, հրեղէն լեզուներ հանած՝  
Դժոխքի նման հնոցն է փնչում:

Վիթխարի գազան հնոցի առաջ  
Բոց ու կրակի տապից թառամած՝  
Մեր կաթսավարը հսկում է նորան  
Ուշքն ու միտքը ջրչափին յառած:

Ամառ ու ձմեռ նա զովի կարօտ—  
Քրտինքն է ծորում դալուկ ճակատից,  
Որ աղօսելով երեսը մրոտ,  
Սև հացի զին է պահանջում բաղդից:

Եւ մի սև օր էլ կաթսան պայթելով,  
Խեղճ կաթսավարին կը զրկի կեանքից.  
Հալալ էն հացը, ով արեան գնով  
Կը խլի նորան հնոցի կրծքից:

1904 թ.

ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԵՐԳԸ

(Ն. Ն.-ի)

Ձեր հարստութիւն, ոսկին ու շուքը  
Ձեր հանգստութիւն, կեր ու խնջոյքը—  
Մենք ստեղծեցինք մուրճով, քրտինքով  
Եւ մեր կարիքով, դաժան կարիքով...

Նայեցէք աղքատ այն խուլ թաղերին—  
Այն աղաոտ, հսկայ գործարաններին,  
Ուր նեղ ու մթին լուսամուտներով  
Տընքում են մրոտ ծխնելոյգներով...

Այնտեղ դժոխքում խիստ, լարած ջանքով  
Աշխատանքի մէջ մարդիկ են տանջում...  
Հաց են վաստակում արիւն-քրտինքով,  
Բիւրաւոր ձեռքեր ճորտի պէս մաշում:

Ձեր հարստութիւն, ոսկին ու շուքը,  
Ձեր կեանքն անդորր, կեր ու խնջոյքը  
Մենք ստեղծեցինք մուրճով-քրտինքով,  
Ուժասպառ դարձած, կոշտացած ձեռքով:

Նայեցէք մոռցւած այն նկուղներին,  
Ուր խոնաւ, ցեխոտ գեանի տակ մթին  
Գալարւում է մերկ-աղքատութիւնը,  
Կարճում իր կեանքը թշառութիւնը...

Մարդիկ կորացած՝ շտապով գործում,  
Գիշեր ուց երեկ մուրճերն են ձեծում,  
Այնտեղ մշտական հողսի տակ ընկած  
Ճախարակի մօտ բանւորն է կանգնած...

Ձեր հարստութիւն, ոսկին ու շուքը,  
Ձեր գլարճութիւն, կեր ու խնջոյքը,  
Մենք ենք ձեռք բերել մուրճով, քրտինքով,  
Ծանր ու չարքաշ մեր աշխատանքով:

Նայեցէք պարապ, յղփացած բոռեր,  
Թէ ինչպէս մարդիկ լիզը ձեռքերում  
Սապատուն մէջքով փորում են հորեր,  
Տանջում գեանափոր, խոնաւ հանքերում.

Ճնշում է կուրծքը համր խաւարից,  
Գերեզմանային հեղձուկ գագերից,  
Փոշու մէջ խեղդւած, անյայտ, մոռացւած,  
Մարդիկ գեանի տակ մեռնում են հազից:

Ձեր փարթամութիւն, ոյժն ու հաճոյքը,  
Ձեր յարմարութիւն, շուք ու խնջոյքը  
Մենք ստեղծեցիք սապատուն մէջքով  
Եւ մեր անողոք, սարուկ-կարիքով...

Ո՞վ ճեղքեց կուրծքը այն յաղթ սարերի,  
Մութ խոռոչները անթափանցելի,  
Երկաթուղիներ անապատներով,  
Այն ո՞վ կամուրջներ ձգեց գետերով...

Ըմբոստ ոյժերը ովկիանների  
Ո՞վ յաղթահարեց վիթխարի կամքով,  
Կատաղի թափը վայրի յորձանքի  
Ո՞վ զսպեց արգեօք իր աշխատանքով...

Ձեր կեանքն ու բարիք, ձեր ոյժն ու ոսկին,  
Ձեր իշխանութիւն ընդդէմ տարերքին,  
Մենք ստեղծեցինք մուրճ ու կոր մէջքով,  
Արիւն-քրտինքով, քաղձ ու տանջանքով,  
Եւ մեր կարիքով, դաժան կարիքով...

Ո՞ւմ ոյժ ու ջանքով են կառուցանուում  
Շուքը տաճարի, գոռ պալատների,  
Ո՞ւմ չարչարանքով երկինք բարձրանում  
Հսկայ շէնքերը մեծ քաղաքների...

Ո՞ւմ աշխատանքով բերել, թափել էք  
Լեռնակոյտերը ձեր ապրանքների,  
Մենք զրանց համար քրտնել, մաշել ենք,  
Բոլորը մեզնից խլեցիք ձրի:

Արթնացիր, ուրեմն, մերկ-աշխատաւոր,  
Մութ նկուղներից լոյս աշխարհ ելիր,  
Է՛յ աղքատութիւն, ցնցոտի-տկլոր,  
Վերջին պատասխան, դ՛ուրս եկ, պահանջիր:

Դ՛ուրս ելէք, խեղճեր, գունատ ու հիւժւած,  
Ծիւրւած շապիքով, սապատուն մէջքով,  
Կոշտացած ձեռքեր, դուրս ելէք, յոգնած,  
Քաղց ու զրկանքի անգուսպ բողբոջով...

Արթնացիր ամբոխ, խզիր լոռութիւն,  
Դ՛ուրս ել աշխարհի վիթխարի զաւակ,  
Թո՛ղ որ ճոխութիւն, գոռոզ մեծութիւն  
Լսի նոր խօսքդ վերջին, համարձակ...

Պահանջիր քեզ բազդ, լոյս, ազատութիւն,  
Ազատ իրաւունք, հաւասարութիւն.  
Պահանջիր դու գոհ, սէր ու միութիւն,  
Ամեն տեղ տիրի թո՛ղ արդարութիւն...

Արթնացիր, ուրեմն, մերկ-աշխատաւոր,  
Մութ նկուղներից լոյս աշխարհ ելիր,  
Է՛յ աղքատութիւն, ցնցոտի-տկլոր,  
Վերջին պատասխան, արի, պահանջիր...

1906 թ.



9679-73

Մ Ա Յ Ի Ս Ի Մ Է Կ Ը

Գարնան յուսատու, այս ուրախ օրին  
Դուրս ելէք խուճը-խուճը բանւոր, ընկերներ  
Եւ ողջնն տալով դաշտ ու ձորերին,  
Երգէք ձեր ազատ, տօնական երգեր:

Գոռ արձագանքը ձեր յաղթ երգերի  
Թող սարսափ ազդի թշնամու սրտին,  
Թող ցնցի հոգին բռնաւորների,  
Հանգիստը խլի ճնշող հարուստին:

Գարնան անգրանիկ մեր այս տօն օրին  
Պահ մի մոռանանք վիշտը բանւորին.  
Մեր ցաւ ու հոգսեր սար ու ձորին տանք,  
Ազատ երգերով գովենք աշխատանք:

Եւ թող խլանայ ձայնը բռնութեան—  
Ազմուկ չլսի գործարաններից,  
Այսօր մեր տօնն է վեհ գիտակցութեան—  
Թող պայթի աղան յամառ զայրոյթից:  
1906 թ.

Ո Ի Թ Ժ Ա Մ

(Նմանողութիւն)

Տղերք, էլ ոյժ չմնաց մեր մէջ,  
Մենք չափազանց շատ յոգնեցինք.  
Կեանքի համար կուեւ անվերջ—  
Մա էլ կեանք է, որ քաշեցինք...

Օդ ենք ուզում, կարմիր արև,  
Ծաղիկ, աղբիւր անուշահամ,  
Ազատ, վստահ եկէք յայտնենք՝  
Պահանջում ենք միայն ուր ժամ:

Գործարանում ու հանքերում,  
Ամբոխի մէջ—ժողովներում  
Հուժկու ձայնով դուք կնչ արէք՝  
Պահանջում ենք ամենուրէք—

Ութ ժամ՝ աշխատանք,  
Ութ ժամ՝ քուն,  
Ութ՝ հանգստութիւն:

Դաշտում անգամ մեր եզները,  
Թռչունները ջինջ եթերում,  
Սար ու քօլում գազանները  
Բախտաւոր են մեզնից ապրում:

Թէ այդպէս է, էլ ինչո՞ւ ենք  
Ապրում, եղբարք, այս աշխարհում,  
Եկէք շարք-շարք միանանք մենք,  
Մեր պահանջը առաջ տանենք:

Առաջ տանենք, այդպէս ցոյց տանք,  
Թէ ոչ ոքից չենք վախենում.  
Հուժկու ձայնով, դէհ, կոչ արէք,  
Պահանջեցէք ամենուրէք—

Ութ ժամ՝ աշխատանք,  
Ութ ժամ՝ քուն,  
Ութ՝ հանգստութիւն:

1906 թ.

## ԲՈՒՐԺՈՒԱՆԵՐԻՆ

Այդպէս, օրերը սահում են արագ  
Եւ դուք դեռ թաղած ճահիճի տիղմում,  
Սողում էք, որպէս ճիճուներ անարգ,  
Մոլի կրքերը ձեր չէք էլ մեղմում:

Դուք սովոր տիղմի գարշահոտութեան—  
Եւ ձեզ թւում է շնչում էք ամբրոս,  
Ծծում էք թոյնը անմիտ գեղխութեան,  
Ու ձեզ համարում վայելքի հերոս:

Այդպէս, հիւժւում է ձեր հոգին մեռած,  
Դարձեալ դուք գերի զազիր վիճակին.  
Մերո՞ւնդ խայտառակ, ու այլասեռած,  
Ձեզ ո՞ւր է տանում պտոյտը կեանքի:

Նայէք, կարիքը հազար թև առած՝  
Ճախրում է ազատ, իր ելքը վնտրում,  
Մինչ դուք հարազատ կեանքից անջատւած՝  
Դեռ նրա շարժման արգելք էք լինում:

Մերո՞ւնդ մեղսալի, սերո՞ւնդ ճահճային,  
Դուք ի՞նչ պատասխան պիտի տաք մի օր  
Լաւ ապագային:

1905 թ.

ԵՐԿՈՒ ԱԽՈՅՆԱՆ

Հազար բերանի մի բողոք էր այն,  
Որ բռնկել էր վաղ առաւօտեան.

Գործարանների շշակներն էին,  
Որ սուլում էին,

Նաւթահանքերի գուղօկներն էին—  
Բողոքում էին:

Բայց ահա, կարծես, մեղկ ու վնասանձ՝  
Ըմբոստ ձայները իջնում են հատ-հատ,  
Մինչդեռ երկուսը պայքարի մտած՝  
Դեռ սուլում էին զիլ ու անընդհատ:

Մէկը նոցանից խզած հնչիւնով,  
Նման յուսահատ թոքախտաւորին,  
Միւսը՝ առիւծի գոռ մոնչիւնով,  
Կոչ էին անում աշխատաւորին:

Մէկը ասում էր.— Դէհ, բանւոր ընկեր,  
Կարբիր անուշ քունդ, արի գործարան,  
Ես էլ եմ ճնշւած քեզ նման, անպէր,  
Թող մեր քրախնքով կշտանայ աղան:

Միւսը՝ իշխողի բռնակալ ոյժով,  
Բիրտ, խրոխտալի, ահարկու գոյժով  
Ճշում էր կարծես— Գործի ելիք շուտ,  
Ուշանաս, փողոց կ'նետուես անշուշտ:

Եւ լուսաբացին՝ կապոյտ բլուզում  
Բանւոր, փեշաքար գործի են վազում.  
Որի կռան տակ մի կտոր սև հաց,  
Որի ձեռք, երես ցրտիցը կապտած:

էյ, պատրաստ կացէք երբորդ սուլոցին,  
Այսպէս վերջ տւեց թոքախտաւորը.  
Թէև ծանր է խաչը մեր գործի,  
Բայց և շուտ կ'ընկնի՝ մեր բռնաւորը:  
1905 թ.

## ՆԱՄՈՒՄ ՈՒ ՂԵՅՐԱԹ

Դեռ թոթովախօս մի մանուկ էի  
Եւ եօթ տարեկան անգամ չը կայի,  
Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուս՝  
Մի սրբազան խօսք—և դա էր՝ «նամուս»:

Դպրոցի շէմքին դեռ ոտք չ'դրած՝  
Դեռ նոր էի գիրք ես ձեռքս առած,  
Երբ մօրս համբոյր թրջեց իմ ճակատ  
Ու պատւիրեց ինձ անել միշտ «ղէյրաթ»:

Բայց կարճ մնացի ուսումնարանում,  
Աղքատի բախտը, դէ, ինչ է լինում...  
Հօրս պատւէրով սովրեցի արհեստ,  
Սիրեցի նորա վաստակը համեստ:

Եւ այն օրից յետ,  
Երբ ընկերացայ մուրճ ու սալի հետ,  
Քրտինքը զէմքէս ծորում է կաթ-կաթ  
Ու ինձ յիշեցնում նամուս ու զէյրաթ,  
Նամուս ու զէյրաթ:

1895 թ.

## ՀՐԴԵՂ ՀԱՆՔԵՐՈՒՄ

(Աղա-Նեգր.)

Հազար կանգունի խորութեամբ ձգւած  
Սև-մութ երախով հանքն է ընկած.  
Նրա անցքերում անձուկ շերտերի,  
Որպէս սև վոհմակ ուրևականների,  
Վխտում են, շարժում հանքափորերը՝  
Շատ վաղուց սովոր բանդ ու խաւարի:

Թւով հինգ հարիւր նոքա ամենքն էլ  
Ունեն թոկ, քլունգ, լապտեր, գործիքներ.  
Դժբանդ հերոսներ, նոքա ժայռի հետ  
Կրճքով են կուում, բացում արահետ.  
Նոքա քաջառողջ, ջահէլ, անձուկ,  
Բանում են, ինչպէս կայտառ զինւորներ:

Փորելով հողը տոկուն արիութեամբ,  
Նոքա վարժել են դիմացկանութեան.

Այժմ հարազատ այդ թարմ ոյժերը  
Եկել են փշրել պողպատ լեռները,  
Որ խորտակելով լերկ ու ահաւոր  
Կուրծքը ժայռերի—գնան դէպի խոր:

Ութ ճիւղեայ կեռը ժայռին են ցցում,  
Չանգոռում, յօշոտում, չեն խղճում նորան,  
Կրծում են հողը, արագ մագլցում,  
Հանգիստ չեն առնում գոնէ մի-վայրկեան.  
Եւ մօտ է ահա վրէժի բուպէն...  
Ժայռի տնքոցը լսեց անդրնդէն...

Ու մի ակնթարթ՝ պայթեց լապտերը,  
Անեղ ճայթիւնով հանքը որոտաց,  
Շառաչող գազի բոց-ալիքները  
Ցայտում են հրեղէն լեզուներ հանած.  
Դժոխք է ժայթքում բացւած ձեղքերից,  
Չկայ փրկութիւն, էլ յոյս մի տեղից:

Փայտէ կամարներն ճարձատուփներով  
Փլչում-ընկնում են խոր հորերի մէջ.  
Բովերի խորքում մարդկանց թաղելով,  
Սողում է խեղդող կրակը անշէջ,  
Մահացու փայլով սողում է, անցնում  
Եւ օձի նման հեռուն տարածւում:

Եւ ազահաբար կրակի բոցը  
Վառել է հանքը, ինչպէս հնոցը,

Փլչում են այրւած հաստ գերանները  
Ու իրար խառնում մարդկանց ձայները.  
Սոր նկուղներից լսում է ահա  
Անասունների բառաչիւնները:

Բոցի հոսանքը բեկւած ձեղքերից  
Դժոխք է բացել բանւորին ընդդէմ,  
Բայց դեռ կուռում է կեանքը մահւան դէմ.  
Եւ բնազդաբար ամեն մի բանից  
Կախւում է ամբոխն, կամ փախչում ահից,  
Օգնութիւն հայցում փայտից ու՝ քարից:

Որպէս սե ղեեր, եռուն հորերում,  
Շուտով վառ ածուխ նոքա կզառնան,  
Բայց դեռ ահաբեկ այրւած շորերում  
Վազում են կատաղած գազանի նման.  
Նրանց աչքերը ահա արնալից  
Դուրս պիտի ժայթքեն, կարծես կուպերից:

Մի տեղ սարսափով դէպ վեր են սողում,  
Այլ տեղ խեղդում են ծխի հեղեղում,  
Եւ օդ են բոռում, և՛ արև, երկինք,  
Եւ լոյս են ցնորում, և՛ գոռ փոթորիկ,  
Մի չնչին շարժում—բնութեան յուզում,  
Որ ազատ շնչել, ապրել է ուզում:

Օ՛, սարուկի կեանք, թշւառ ժողովուրդ,  
Դնւ որ տոկում ես ծխով լի հանքում,

Անթափանց, մթին, կարծես դժոխքում,  
Դո՛ւ, որ օր-գիշեր կեանքդ քարշ տալով  
Դժբաղդ կոյրի պէս արև չես տեսնում,  
Այդպէ՛ս ես արդեօք կեանքը հասկանում.

Եւ սակայն նորա այս կեանքն են ուզում,  
Բուռն ձգտումով դէպի նա վազում,  
Յախուռն տենչով լքած հոգսերով,  
Քարերն են քերում արնոտ ձեռքերով,  
Պատերն են լիզում, ճգ են աղերսում,  
Օղի փոխարէն ծուխ, մուր են ծծում:

Իսկ ժամանակը նորից ու նորից  
Ձոներ է ուզում աշխատաւորից.  
Հողն է տաքացել ետուն արիւնով,  
Ընկնում է ողջը շփնդ հանելով,  
Եւ ամենուրէ՛ք մահ ու փլատակ...  
Շարժւում են մարդիկ այրւող մոխրի տակ:

Կատաղի բոցը հիւանդոտ ջանքով  
Նորից ուռնում է վայրի քրքիջով,  
Միմեանց դէմ հանում վրէժն ու մահը,  
Ու ծաղրում դժբաղդ այս պատահարը,  
Վերջապէս հանգաւ բոցը ոխերիմ,  
Հանքը դարձել է մի հսկայ շիրիմ...

...Լոեց ամեն ինչ...

Վազը կհանեն մութ խողոջներից՝

Լաց ու բողոքի աղաղակներով,  
Միրտը քրքրող հեծկտանքներով,  
Ձոների տձև, սև դիակները,  
Այլանդակ նոցա մուր աճիւնները:

Այրւած ու մեռած նրանց շուրթերին  
Կսեղմւեն ջահէլ, կենդանի շուրթեր,  
Լացը աչքերին, կսկիծ սրտերին  
Դժբաղդ զոհերի կթրջեն դէմքերն.  
Եւ կմրմնջան անկապ, երերուն,  
Որպէս հիւանդը զառանցանքներում:

Յետոյ կոյտերով սայլերին բարձած՝  
Գերեզմանատուն նրանց կտանեն.  
Կին ու տղամարդ սևազգեստ հագած՝  
Ամբողջ քաղաքը սուգի կհանեն.  
Ապա ընդհանուր մի խորունկ փոսում  
Կթաղեն նոցա... կտան մոռացում:

Եւ այդ մոռացւած գերեզմաններին,  
Նոցա տակ յոգնած, թշւառ զոհերին  
Կյիշեն միայն սիրուն ծաղիկներ.  
Նրանց հիւթերից նոր մնունդ առած  
Արևի շնչով սնւած, փայփայած  
Կծաղկեն շուշան, վարդ ու մեխակներ:

Թրթռուն խումբը բիւր բզէզների,  
Որ ընտանիքով կանաչների մէջ

Խայտում են անհող, ու ճախրում անվերջ,  
Նորից կեանք կտան համր թումբերին.  
Եւ մեռած կեանքը ազատ ալիքով  
Նորից կծրփայ ուրախ հոսանքով:

Բայց այն զոհերի որբ զաւակները  
Արդէն մեծացած ստրկութեան մէջ,  
Կրած զրկանքներ, գլխակոր ու խեղճ  
Կղիմեն նորից դէպի հանքերը,  
Սև հացի համար կտուկան անվերջ,  
Որպէս և իրանց թշուառ հայրերը:

Մէկ-մէկու յետքից, շարեշար, տրտում  
Նորա կղիմեն մթին հանքերին,  
Գուցէ հնացած խարխուլ շերտերում  
Յանկարծ հանդիպեն իրանց հայրերին.  
Ու իրար տալով հողի կոյտերը,  
Ճանաչեն նրանց սև կմախքները:

Օ, մարդկային ցեղ, Օ, կոյր ու թշուառ,  
Սողալուն սովոր, սերունդ մարդկային,  
Եթէ վեհ խօսքը, փորձը փրկարար  
Անգոր են այլևս խեղճ, ստրկային  
Ազատել անարգ քո շղթաներից—  
Լաւ է գերեզման մտնես այս օրից:

Կեցցէ կրակը, որ աւերում է,  
Ջնջում աշխարհից շարիքը կեանքի—

Որ հալածելով իր հետ տանում է  
Տափնապը քաղցի ու տառապանքի.  
Որ անյայտութեան մատնելով մարմինն,  
Հանգիստ է բերում լքման զոհերին:

Կեցցէ կրակը, որ վրդովում է  
Հանգիստը անհող բաղաւորների,  
Արցունքի միջից որ շնջում է  
Նրանց ալանջին խիստ, սպառնալի.  
«Ելիր, մեծատուն, ու թո՛ղ ծուլութիւն,  
Մեղկ հաճոյքներդ ու մեռելութիւն»:

«Ելիր շտապով ու մերկ ճակատով  
Խոնարհւիր այս թաց խոնաւ հողերին,  
Ընկիր ծնկաչոք ան ու երկիւղով,  
Լիզիր քարերը մոռցած թումբերին.  
Այստեղ հրդեհում նահատակ դարձած՝  
Հացի համար քո զոհերն են ընկած»:

1904 թ.

ԱՐՅՈՒՆՔԻՑ ՅԵՏՈՅ

Ինչպէս լուսինը երկնակամարում  
Անձրեկից յետոյ փայլում է պայծառ,  
Ինչպէս աստղերը պարզւած եթերում  
Շողին են տալիս էլ աւել կայտառ,

Այնպէս էլ սիրտս, արցունքից յետոյ  
Սրբւում է, գաւում ճնշող ցաւերից,  
Եւ իմ խոհերը եռանդուն շեշտով  
Ձգտում են եթեր՝ թե առած նորից...

Ինձ հանգիստ բերող, արցունք թունալից,  
Լքեալ ժամերին արի ու կախիլը  
Դու իմ աչերից:

1903 թ.

Ա Մ Ե Ն Ա Ն Գ Ա Մ ...

Ամեն անգամ, երբ տեսնում եմ  
այն խելացնոր դժբաղդին,  
Որը մռայլ բարշ է գալիս  
անիծելով իր բաղդին,  
Ուզում եմ թէ սիրտս պոկեմ 》  
գնեմ նրա կրծքի տակ,  
Ա՛ն քեզ, եղբայր, ասեմ նորան,  
Թող ես կրեմ քո տանջանք:

Ես ուզում եմ նրան մօտենալ  
վշտակցելու, շոյելու,  
Սիրոյ ցաւից շանթահարւած  
նրա հոգին բուժելու.  
Ա՛խ, ուզում եմ գոնէ հարց տալ,  
մի խօսք լսել նորանից.  
Տանջւած եղբայր, ո՞ր տմարդին  
քեզ անջատեց քո ետրից:

Բայց վախում եմ, թէ մօտ գալով,  
խորտակեմ թոյն—անդորրը  
Նրա սրտի և իմ հարցով  
յիշեցնեմ այն սեւ օրը.

Վախենում եմ, վայ թէ յանկարծ  
վէրքը նորա պատառւի  
եւ պալարից տանջւած հողին  
նորից ցնցւի, սարսըռի:

Եւ ամեն օր, երբ տեսնում եմ  
նրան մենակ քարշ գալիս,  
Քսու մարդկանց հալածանքից  
խուսափելիս, կամ լալիս,  
Քիչ է մնում սիրտս պոկեմ,  
զնեմ նրա կրծքի տակ,  
Ա. ո. քեզ, եղբայր, ասեմ նորան,  
Թող ես կրեմ քո տանջանք...

1902 թ.

## Դ Ա Ր Բ Ն Ի Ե Ր Գ

Առանջ, եղբայրք, երկաթ կռենք—  
Թող դողդողայ մեծ սալը,  
Շանթի տարափ մեր շուրջ՝ փռենք—  
Լուսաւորւի աշխարհը:

Մենք բնութեան առողջ գաւակ  
Քրտինք հեղենք—սև արիւն,  
Զլուտ բազկով ճարենք վաստակ—  
Մօհաաջ չլինենք թշնամուն:

Առանջ, եղբայրք, էլ կանգ չառնենք,  
Մօտ է անս լաւ օրը.  
Այնպէս թափով սալին զարնենք,  
Որ դողդողայ աշխարհը...

1905 թ.

(ՆԻԷՐ ՕՐ. ԱԶ-ԻՆ)

Երբ որ նայում եմ անկեղծ, պարզամիտ  
քո վճիտ դէմքին  
Եւ այդ մանկական, պայծառ, միամիտ  
խելօք աչերին,  
Ասա, իմ սիրուն, ինչո՞ւ է սիրաս  
• Ըրբցւում անհուն բարձր յոյգերով,  
Ինչո՞ւ իմ հոգին ոգևորում է  
ազնիւ խոհերով:  
Ինչպէս արևը, որ կեանք է տալիս  
Թառամած ծաղկին,  
Եռանդ ու աւինն վհատ թռչնակին,  
Ինչպէս լուսինը, որ փայփայելով,  
Ոսկեգօծում է մռայլ, մտորող,  
սևուկ ամպերին,  
Այնպէս էլ, սիրուն, հոգիս է փայլում,  
Երբ որ պատահամա՞ք  
Նայում եմ երբեմն քո պարզ ու յստակ  
խելօք աչերին:

1906 թ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄԻՆ

(Նւիրած Ղ. Աղայեանին՝ իր 40-ամեակի առթիւ)

Հսկայ կաղնի տակ շարքով նստոտած՝  
Մենք մանուկներս դաս էինք սերտում.  
Մայրենի լեզվին ջերմ սիրով կապած՝  
Կեանքի ու լուսոյ էինք մենք ձգտում:

Ու լսուեց մեզ հետ լեզուն մայրենի.  
Շատ զրոյց, հեքեաթ պատմեց մեր սրտին,  
Երգեց աշխատանք, գուլթան հայրենի,  
Գովեց մօր սէրը, դարձաւ առաջնորդ  
Մանուկ մտքերի:

Անցան տարիներ...

Մայրենի լեզվի անուշ ել և էջ  
Մեր մօր կաթի պէս դարձաւ սիրելի,  
Մնւած նորանով, մտանք կեանքի մէջ,  
Ու լսուեցինք զինւոր լինել քաջարի:

Այժմ մեր առաջ այլ կաղնի հասակ  
Կանգնած է այսօր ճակատին պսակ.  
Նայէք, մանուկներ, ահա նա կարծես  
մեզ ասում լինի.  
—Չմոռնաք, որդիք, լեզուն մայրենի:

Մայիսի 25-ին  
1902 թ.

Բ Ա Հ Ի Ե Ր Գ Ը

(Աղա-Նեգր.)

Բահն եմ կոպիտ, գետինը փորող,  
Ե՛լ բիրտ և՛ հերոս.  
Արևին ընկեր, սովին դիմադրող,  
Ե՛լ վիշտ և՛ փարոս:  
Սովոր եմ այրող կէսօրեայ տապին,  
Բուք ու փոթորկին,  
Հեղեղաաներին, հողմի տագնապին,  
Թուխպ ու կայծակին:  
Ծանօթ եմ բոյրին արգաւանդ հողի  
Մայիս օրերի,  
Բոյսերի շնչին, արտ ու գարգերին  
Կանաչ տունկերի:  
Որքան աշխատում, այնքան աւելի  
Սրւում եմ, փայլում,  
Անյողգողդ, հուժկու խրւում եմ գետին,  
Ոյժ չեմ խնայում.

Ազատ մուտք ունիմ աղքատ հիւղերում  
Եւ խրճիթներում,  
Մոռացւած, մոայլ խուլ նկուղներում  
Եւ այն վայրերում,  
Ուր բաց ճեղքերից բուքն է հառաչում  
Ու քամին սուլում,  
Ուր գեանայարկում լի ածխահոտով  
Խանձողն է մլլում:  
Ուր բորը դաժան շրջում է ազատ  
Ներքնայարկերում,  
Ու ապրում որպէս եղբայր հարազատ  
Մարդկանց վարակում:  
Մըտնում եմ այնտեղ ու գաղտուկ նայում  
Թէ ինչպէս մարդիկ  
Լուռ խարխափում են անձուկ խաւարում  
Ու տանջւում սաստիկ.  
Տեսնում եմ ինչպէս ճահճոտ դաշտերում  
Տենդն է մաշում,  
Մարդիկ ուժասպառ խուպոտ թոքերով  
Թառանչ են քաշում:  
Ու ես չեմ քնում, վառ արշալուսեան  
Շողն եմ երազում,  
Խաւարում տնքող թշուա մարդկութեան  
Բաղդին սպասում.  
Եւ ոգևորւած հուժկու ամբոխի  
Ուժով քաջարի,

Կոշտահողերից արդէն ազատւած  
Հիւրն եմ ցանկալի:  
Սպիտակ դրօշը \*) նշան անարիւն  
Վեհ յաղթանակի  
Սիրոյ թևն ելած՝ չարիքն ու ոխը  
Պիտի խորտակի:  
Բեղմնաւոր հողի բարիքից արբած,  
Որպէս վարդի բոյր,  
Մարդիկ կգրկւեն ու կտան իրար  
Հաշտութեան համբոյր:  
Եւ անս ձայնը փրկւած ամբոխի  
Երկինք կթռչի,  
Սէր, խաղաղութիւն, ազատ աշխատանք  
Երկրին կհանգչի:

1904 թ.

\*) Որպէս էմբլեմա խաղաղութեան.

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻՆ

Ձմեռ է խորին... ցելերի տակին  
Հանգիստ են առնում հացահատիկներ,  
Ննջում է արմատն հեզ մանուշակի,  
Նիրհում են ցամքած ծառ ու ծաղիկներ:

Ձմեռ է խորին... բայց եւ այս կանցնի.  
Ձիւնը կըհալչի, հողը կազատւի  
Խիստ կապանքներից, արտը եղեամից,  
Սերմը իր ճնշող հողաշերտերից:

Կը գայ գարունը և ջերմ արևից  
Սերմերը նոր ոյժ, նոր հիւթ կը ստանան,  
Հողա-ճումբերի մէջքը կը ծրուեն  
Եւ նրանց տակից յոյսեր կ'ծրլեն:

Ծառերը այնժամ նոր շորեր հագած—  
Նշենին՝ կանաչ, կարմիր՝ նունենին,  
Ծաղիկների հետ համերաշխ գրկւած  
Կը դիմաւորեն գարնան մեծ տօնին:

Օ՛, պատրաստ լինենք այդ օրին և՛ մենք,  
Նրա գալուստը պատուով ընդունենք...  
Ողջոյն քեզ, գարուն, պսակ բնութեան,  
Անսպառ աղբիւր—ողևորութեան:

1904 թ.

Լ Ա Յ Ի Ա Ղ Բ Ի Ի Ր

Կար ժամանակ, երբ բարձունքից  
Խիզանի, ազատ մի երգով  
Նա քարափի լայն շրթունքից  
Ցայտում էր յորդ հոսանքով:

Եւ երգում էր աղմկալի  
Եւ անընդհատ զրուցում,  
Հարս ու գեղջուկ ջահիլների  
Քչփչոցին մասնակցում:

Մեր խեղճ գիւղի արտ-արօտիք  
Նրա յոյսովն էր ապրում,  
Մեր նորատունկ ծառ ու ծաղիկ  
Բողբոջ առնում ու յափրում:

Եկաւ սակայն ժամանակը  
Այլ ժամանակ սեւ օրի  
Եւ աւերեց նորա ակը,  
Փակեց լեզուն աղբիւրի:

Այդ օրերից մինչև այսօր  
Էլ չի երգում աղբիւրը,  
Կանթ-կանթ, ասես, ջահիլ սգւոր,  
Լացում է իր սև օրը:

Լացում է նա և հինաւուր  
Էլ չի լսում խոխոջում,  
Լացում է նա... Լացի աղբիւր  
Այժմ նրան եւ կոչում...

1902 թ.

Է Ս Ք Ի Ջ Ն Ե Ր

Բազէն կուսասէր ոլոր պտոյտով  
Անհուն եթերի ծովումն էր լողում,  
Ամպերը ճայթող՝ կատաղի շեշտով  
Հուր ու կայծակի կռիւ են մըղում.  
Հասկացաւ իսկոյն դժբաղդը կեանքի,  
Որ մօտ է ժամը գուժող վտանգի—  
Ու ելաւ նա վեր հպարտ ու դանդաղ,  
Արհամարհելով և՛ վտանգ և՛ վախ...  
Ամպերը անեղ մըռնչումներով  
Յետևից ընկան, հալածանք տալով,  
Ու կէս ճանապարհ... լուեց մի հառանչ—  
Բազէն ընկած էր իր բունի առաջ...

Կիզիչ արևի տապի տակ ընկած՝  
Վարդըն էր բուրում, թփից նոր պոկած,  
Եւ վերջին անգամ հոտ տարածելով,  
Թւում էր իրեն զօրացած բոյրով.  
Սուգած նա այդպէս մոռացութեան մէջ  
Կարծում էր կեանքը էլ չունի մի վերջ,

Եւ երազում էր խինդ, լաց ու համբոյր,  
Տենչում էր կեանքի ծծել հըրապոյր,  
Բայց չէր նկատում դժբաղդը կեանքի,  
Որ մօտ է ժամը դալուկ ցընորքի...  
Ժամ ժամի յետքից թերթերը թուլցան,  
Փոշի ու քամու հետ անհետացան...

Պօէտը ընկաւ մի խաւար շրջան,  
Ձեռք առաւ շահը լոյս տալու կեանքին.  
Չարանենդ մարդիկ չըզլիկի նման  
Վրայ տըւեցին, լոյսը մարեցին,  
—Մենք անսովոր ենք լոյսին—ասացին.  
Բայց չը վըհատեց դժբաղդը կեանքի,  
Վաղուց էր ծանօթ նա հալածանքի,  
Լարեց քնարը... Վիշտ ու ցաւ հոսեց  
նրա երգերից,  
Աշխարհը ցնցեց ու ալեկոծեց  
մըմուռ վերքերից.

Եւ այդ երգի մէջ սփոփանք գտաւ  
ամբոխը կեանքի  
Եւ այդ երգն էր, որ թարգման դարձաւ  
անմեռ տանջանքի:



Այսպէս նա խօսեց արցունքը աչքին  
Ու անհեռացաւ լեռների յետքին...

Մինչ ուրախութեան երգերն են թնդում,  
ձերուկին ծաղրում,  
Մայր երկրի վրայ վառ ու յաղթական  
գարունն է տիրում:

1902 թ.

Հ Ո Ղ Ը

Տունը ինձ տափանք, փոցխը, բանն ու թին,  
Գարնան արևը թո՛ղ դէմքս այրի,  
Նրա կրակոտ համբոյրի տակին  
Քաղցը է կրել բեռը հոգսերի. »  
Առողջ թևերս ես վեր կքշտեմ,  
Շորերս գօտիխ, ծամս կկապեմ,  
Թո՛ղ նւաստութիւն համարեն մարդիկ  
Մե աշխատանքը չարքաշ գեղջուկի,  
Նա ինձ կբերի կ' բազդ կ' բարիք:  
Կուզէի տեսնել ես այստեղ յոգնած,  
Նիհար ու փտիտ նազելի կանանց.  
Օ, դուք՝ տերիներ, քամուց հալածւած,  
Օ, դուք՝ ծաղիկներ, զիշերով ծաղկած,  
Մեղսոտ ու հիւանդ ձեր ցնորքներով,  
Անգործութիւնից դեղնած այտերով  
Դէպի մայր հոգը դիմեցէք շուտով:  
Վնյ նորան, սվ որ փախչում է հողից,  
Ո՛վ խուսափում է չարքաշ կենցաղից.  
Կօրսէթ, սլաճուճանք հանէք, ձգեցէք,

Նրանց ճնշումից կուրծքն է թառամում,  
Որպէս ծաղիկը յափրած շերմոցում,  
Մաքուր, թարմ օդին, լոյսին մօտեցէք,  
Դէպի մայր հողը Տիրոջ պարգևած:  
Տեսէք, քանի կեանք կայ այն հողերում,  
Որոնց գութանը դեռ չէ շօշափած,  
Ուր բզէզները ոստում են, վխտում,  
Որոնց շերտերին սերմն է կարօտում.  
Նրանց արգաւանդ ուժեղ ծալքերից,  
Ծառերի բնից ու երակներից  
Եռուն, անհամբեր հիւթերն են ծորում,  
Որպէս յորդ կաթը ծծմօր ստինքից:  
Ձերմ արևի տակ փայլ ճաճանչների,  
Առատութիւնն է ուրախ ծածանում,  
Ոսկի ցորենի արձակ դաշտերում  
Առատութիւնը կանաչ խոտերի.  
Հասկերի միջից բաց ճակատներով  
Ծաղկունքն են ժպտում հազած ծիրանի.  
Խոնաւ, հեղեղած ագարակներում  
Յանքսերն են շողում թաւիշ գորգերով.  
Լայն հովիտներում թարմ ծաղիկների  
Թմբիր ներշնչող բոյրն է թանձրանում  
Եւ դէպ՝ ալետր ամպերն բարձրանում:  
Օդի մէջ կարծես տիրում է աշխոյժ,  
Մի կեանք թրթռուն, կենսունակ մի ոյժ,

Որ ամեն քարի հոգի է շնչում,  
Ամեն հիւլէի եռանդը շարժում,  
Եւ արևի տակ պարզ ու բնական  
Շնչաւոր, անշունչ սէր է շրջնջում.  
Օ՛, դէպի հողը, դէպի մայր հողը,  
Դէպի հինաւուր մեզ հաց տուողը,  
Լարւած ուժերով եկէք շտապենք,  
Նրա գրկի մէջ ոյժ ու ճիգ թափենք,  
Խլենք նրանից կենսատու բերքեր,  
Եւ անուշաբոյր ժողովենք հասկեր,  
Ու ժպտանք անհոգ բաղդաւոր ապրենք:  
Եւ Մեսսիգօրը համայն բնութեան  
Հեղեղ տարածէ թո՛ղ առատութեան.  
Բաց են դռները նրա առաջին  
Եւ չքաւորի կ' թագաւորի.  
Մենք զաւակներ ենք հարուստ բնութեան,  
Անխտիր կերպով նա կոչ է անում,  
Ամենքիս դէպ՝ իր գիրկը հրաւիրում.  
Օ՛, այստեղ եկէք, բաց կամարի տակ—  
Ո՛վ հգօր ազգի հգօր ժողովուրդ  
Մենք բազուկներով առողջ ու ջրուս  
Եւ գեղեցիկ ենք կ' ազնիւ հոգով,  
Այստեղ է կեանքի, լոյսի նպատակ.  
Ազատ օդի մէջ ազատ շնչելով,  
Կուրծքն է զարգանում, թոքը լայնանում,

Ձառում է հոգին, միտքը թարմանում.  
Ինչպէս երկնքում արևից առաջ  
Վառվում են շողերն թարմ արշալուսեան,  
Այնպէս էլ կարծես կորչում են անա՛  
Տառապանք ու վիշտ թշուռ մարդկութեան.  
Ձգում է հոգին, որ էլ չկայ վախ  
Եւ ոչ պատերազմ, ո՛չ դաշտեր արեան,  
Շուրջ տիրում է յոյս ու ազատ կեանք  
Եւ ամենուրեք եռուն աշխատանք:  
Օ՛, դէպի հողը, դէպի մայր հողը  
Դէպի հինաւուր մեզ հաց տւողը  
Եկէ՛ք շտապենք.  
Այնտեղ է առողջ կեանքի նպատակ:  
1904 թ.

Ն Ո Ր Տ Ա Ր Ի Ն

(1905)

Ահա կը դարկի մեծ ժամացոյցը  
տասերկու անգամ  
Եւ օրհասական նրա անողոք  
վերջին դարկի հետ  
Ծերուկ, հին տարին անհունի խորքը  
կը նետւի անհետ:  
Եւ այդ վայրկեանին մարդիկ անհամբեր  
շուտ ոտի կեննեն,  
Բաժակներ կալած նոր տարւայ մուտքը  
բարձր կողջունեն.  
Տեղի կունենայ համբոյրի հեղեղ...  
Իբար կը ցանկան  
Հազար մի բարիք—  
Բաղդաւոր տարիք...  
Կը թռչի օգում դաշնակի ալիք  
և՛ երգը ուրախ,



ԱՄԲՈՆԻ ԿՈՉԸ

Արի պօէտ, բարի պօէտ,  
Երգդ հիւսիք մեր ցաւից.  
Ընկերացիր մեր սրտի հետ—  
Թեթևանանք հոգսերից:

Վիշտը շոյող ու փայփայող  
Երգը դարձաւ ձանձրալի  
Եւ ողբ ու լաց մխիթարող  
Նւազն էլ չէ ցանկալի:

Երգիւր դու մեզ բուռն ցայտամար  
Սրտի բողոքն անմեղի  
Նշաւակիր անգուսպ ցասամար  
Բռնութիւնը ուժեղի:

Արի պօէտ, բարի պօէտ,  
Երգդ հիւսիք մեր ցաւից.  
Երգդ ապրի մեր ցաւի հետ—  
Թեթևանանք հոգսերից:

1902 թ.

Կ Ը Տ Է Ն Ի

Նոր լուսացած Սանդուխտ նանը  
Ձէն է տալիս ծերուկ ապօր.  
«Ա՛ հայ, վեր կաց, էսօր տանը  
Ալիւր չունենք ո՛չ մի հափուռ»:

Տընքտընքալով ծերուկ ապին  
Քընատեղից վեր է կենում,  
Ալրի տոպրակ կըռան տակին  
Դէպի շուկան է նա գնում:

Ու տոպրակը կապած բերնից  
Շալակում է, տուն է գալիս,  
Ծերուկ ճակտի խորշոմներից  
Քըրտինքըն է ծոր-թափ տալիս:

Նանը շտապ կապն է բացում,  
Ալիւրն ածում մեծ տաշտի մէջ,  
Տըխտըմորում, խըմոր հունցում,  
Պիւլեր անում, շարում անվերջ:

Ապա բերում ձախի կապեր  
Թորոն վառում ճրճրճրթալի,  
Մինչդեռ անկիւն քաշած ապէր  
Իր շիբուխին է գոռ տալի:

Նանը թորնի կողքին նըստած  
Գոգնոց կապած, կըռներ քըշտած՝  
Պիւն է առնում երկու ափին—  
Ու թափ տալով, զարնում տեափին:

Բայց ծալ-պիւլը թորնի ետին  
Կըպած մընալ չի կարենում,  
Մէկ էլ տեսար թըրըմփալին  
Մոխրի մէջ է նա գըլորում:

«Վարսըս կարեմ», նանն է ասում,  
«Հացս, սյախ, ճիլ է ընկել,  
Աչքը դուրս գայ Մայան ագուն—  
Թորնի հերթից նա է զըրկել»:

Ա՛խ է քաշում, բայց ինչ անի.  
Երկու թորոն աւան հացեր  
Դիփ դարձել են կոնդ-կըտէնի,  
Քերինջներն են լոկ մընացել:

«Ա՛ դեաթըդ խէր, ա՛ հայ, լինի,  
Չէի՛ր կարող ալիւր բերել,

Բերած ալիւրդ հենցա լինի  
Կորեկ, գարի, զըրզըրալի»:

Քանի այսպէս նանն է լալիս  
Ահա ոտի ձայն է գալիս.  
Մօտեցողն է ժամհար Մօսին,  
Փայտը ձեռքին, խուրջինն ուսին:

«—Ղօրմի Աստուած, Սանդուխտ նանի,  
Ժամը պըրծաւ, նոր եմ գալի,  
Թաժա հաց բեր Մօսին տանի,  
Արքայութիւն հոգուդ լինի»:

Նանն ընտրում է լաւ կըտէնին,  
Տալիս նորան հոգու բաժին.  
«Էսօր ժամ չեմ գընացել ես,  
Ե՛րնէկ հոգիս փըրկւի այսպէս»:

1903 թ.

ԱՇԽԱՏԵ՛Ղ ԵՍ ԴՈՒ

(Ա.դա-Ե.ե.գր.)

Յափշտակած դու ինձանով,  
կրքոտ սիրով տոգորած՝  
Ձերմ համբոյրներ, գրկախառնումն  
սպասում ես փոխադարձ.  
Փափագում ես գուրգուրելու,  
տիրանալու իմ սրտին,  
Կարօտում ես թարմ, կուսական,  
մատաղ սիրոյ թովչանքին:

Բայց, ասն ինձ, ծանօթ ես դու  
վշտերի հետ դարաւոր,  
Մաքառել ես հերոսի պէս  
վիճակիդ դէմ բռնաւոր.  
Եւ որպէս մի վախկոտ սարուկ  
չէս վհատել նեղ ժամին,  
Ձէս խուսափել հաս վտանգից,  
որ զոհ չտաս դու կեանքին:

Անդուլ գործից առաջացած  
ցնյց տուր ձեռքիդ կոշտերը,  
Ես կիմանամ սիրո՞ւմ ես դու  
արդեօք ազնիւ աշխատանք.  
Ասն գոնէ, տանջւել ես դու  
մինչև սրտիդ խորքերը  
Չարքաշ, թշւառ մարդկանց համար—  
և ի՞նչ է քո նպատակ.

Դու լռում ես... հեռու ուրեմն )))  
իմ ջերմ սիրուց կանացի,  
Աշխարհային վայելքներդ,  
գնն, կրկին նորոգիր.  
Սիրիք ընկած լպիրշ կանանց  
առանց խղճի խայթոցի,  
Գծուծ ոսկին ինձ տիրանալ  
անկարող է, իմացիր:

Օ, եթէ ես երբ և իցէ  
քո ձեռքերը տեսնէի  
Քերած, հիւժւած, արիւնլւայ—  
այդ վիճակից ինքնագոհ,  
Թէ ինձանից, որպէս պարզ,  
փոխադէն լուռ տանջանքի  
Պահանջէիր սէր, փայփայանք,  
պահանջէիր անգամ զոհ,

Թէ տեսնէի, որ հեգնանքով  
դու ատում ես ժանդ ոսկին,  
Սուրբ վաստակով ոգևորւած  
վերադառնում այլ կեանքի,  
Տեսնէի քեզ վերածնւած  
կամենում ես մաքառել  
Վիճակիդ դէմ և նոր կեանքի  
արշալոյսը ողջունել,

Այն ժամանակ ես քեզանով  
հպարտացած՝ քաջարի  
Քո զրկանքով, տառապանքով  
իմ կոյս կուրծքը կայրէի.  
Կը ջանայի թեթևացնել  
վիշտ ու հոգսդ վիթխարի  
Եւ հոգեմաշ դարդիդ համար  
քեզ իմ կեանքը կտայի:

Բայց դու, մեղսոտ կեանքի գաւակ,  
հաճոյքների սիրահար  
Ձեռն աշխատել, ապրել ես զուր—  
կեանքը օտար քեզ համար,  
Դու այնպէս էլ փայփայլած ես,  
բաղդախնդիր ստահակ,  
Կորիւր, անարդ... ես քեզ համար  
պահած ունեմ լոկ զգւանք...

1903 թ.

64



ԿՅՄՆԵՐ ԿՆՆԵՐ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՂԻՆԱԿԻ

- 1) Բանաստեղծութիւններ (սակաւածիւ) 30 է.
- 2) Ազա Նեղրի, ա. պրակ. (սպառւած) . 30 »
- 3) Ազա Նեղրի, բ. պրակ. » » » » 30 »
- 4) Սուտը, (հոգեք. էտիւդ) Լ. Անդրէէի. 7 »
- 5) Աշխատանքի երգեր, (բանաստեղծ.). 20 »

ԳՆՆ Է 20 ԿՈՊ.

Գնել ցանկացոյնները կարող են դիմել՝  
Тифлис, Ком. Банк, Акону Агобян.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0420624

37070